


ՁԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 Տր.
Տարեկան վեցանակայ	6 »
Արսասահակի համար տարեկան	15 »
վեցանակայ	8 »

Անկրիկայի համար	3 սյր.
Տարեկան վեցանակայ	1.50 »

Դրանցում սոյր սոյր զին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ կ. երեսին անջի անգլաներու համար 20 0/0 զեղջ կըլ լայ:

Վառնայի համար մի օր 10 սանթիմ



K. P. Kalémecarian, Mechitharistengasse W. 4. Vienne

Եստակ եւ զրամ զիկ իմրազրուեմնս հասցիին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Արսասահակի համար մեքէ (20 ՍԱՆԹԻՄ) Պուշկարիոյ համար մեքէ (15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք եւ չեկ սրեիր

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ. ՀՐԱՏՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՆԵՐԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ՇԱՐՋՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԿՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵՐԸ ՊԵՏԻ Ե ԿՈՆԵՐԿ ՎՃՈՐԸ

ՍԱՍՆՈՅ ԶԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Մայիս 2/15, երեկոյեան ժամը 6ին Թիֆլիզէն օրու Արմէնիայի կը հեռագրեն հետեւեալը.

Մշոյ դպրոցի բոլոր զիւղերը դժբախտաբար են թուրք կանոնաւոր զօրքերով եւ քիւրտերով, որոնք ամէն տեսակ կեղեքումներ եւ վայրագութիւններ կընեն: Գրատոնեայ բընակչութիւնը ապստամբ փնտոնելով, խուճարով ինքզինը ազատել կըցած է ապստամբելով Սասնոյ լեռները, որոնք նոյնպէս շրջապատուած են զօրքերով եւ պաշտպանութեամբ:

Ազգի ծագեցան շարք մը կռիւներ Սասնեցիներու եւ կառավարական ռեժիմը միջեւ:

Մարտ 31/ապրիլ 12ին սասնեցիները կատաղաբար ետ մղեցին պաշարողներուն մէկ յարձակումը եւ մեծ կորուստներ պատճառեցին անոնց:

Ապրիլ 10/23ին Բիթլիզի նահանգապետը քանի մը հազար զօրքերով, քիւրտերով եւ Բիթլիզի ու Մուշի առաջնորդներու ուղեկցութեամբ տեղ հասան: Հակառակ առաջնորդներու ներկայութեանը Շէնիկը զբաւուեցաւ եւ կրակի մատուցեցաւ: Վերջը գացին Ալմար, բայց Սասնեցիները հրամանատար Հրայրի առաջնորդութեամբ ետ մղեցին: Թշնամիէն քանի մը տասնեակ մարդիկ սպաննելով, Յատոյ, ապրիլ 13էն 25 նահանգապետի հրամանովը, Սուրբ Առաքելոց վանքի վանահայրը, Բիթլիզի եւ Մուշի առաջնորդները հետեւին անոնեանցով պատրիարքի մէկ նամակը դացին Ալմար, սասնեցիները համոզելու որ անձնատուր ըլլան: Բայց այս միայն ժամօրա մըն էր, որովհետեւ 13էն 26ին մինչդեռ հայ հրամանատարները լեռնային կառարները կը թողուին յանձնախումբը զիմաւորել երթալու համար, Գեղաշէնի մէջ նահանգապետը հրաման կուտար յարձակում գործել հայ հրամանատարները յանկարծակի բերելով ձեռք անցնել:

Երբ որ չի յաջողիր, հայ հրամանատարները եւ բնակիչները ժամանակ կուենան նահանգը, իսկ Ալմարը եւ Դաշտոնքը կը զբաւուին, կը հրդեհուին եւ կաւորին թնայնութեամբ: Զօրքերը հալածելով բընակիչները կը տալին Գեղիկըզանի վրայ, ու կը զարնուին հայերու հետ, որոնք շտապով ամէն կողմէ հաւաքուելով կրցեր էին համախմբել: Արմենահեղ կոխ մը կը պայթի, թուրքերը կը պարտուին եւ ետ կը մղուին, կուր գաշար 136 մտեակ:

ներ, բազմաթիւ վիրաւորները եւ շատ մը հրացաններ թողով, Հոյեթէն սպաննուած են 7 հոգի, որոնց մէջ նաեւ հրամանատար Հրայրը, եւ վիրաւորուած 8: Կառավարիչը ապրիլ 14էն 27ին օգնութիւն ստացաւ, նոր ընդհարումը մը կը սպասուի:

4. Պոլսէն 30 ապրիլ թուականաւ թայմիկ կը հեռագրեն.

Պաշտօնական տեղեկութեանց համաձայն լուրջ ընդհարումներ տեղի ունեցեր են Սասուն գաւառին մէջ թուրք զօրքերու եւ հայ ապստամբներու միջեւ, որոնց թիւը 2000-ի կը հասնի, մեծ մասամբ Ռուսիան եւ Պարսկաստանէն եկած: Այս ընդհարումը հետեւանքն է անշուշտ անդրանիկի տեղական կառավարութեան յանձնուելու համար առաջարկուած բանակցութեանց մերժումին: 2) զինուոր սպաննուած եւ 23 վիրաւորուած են, ապստամբներուն կորուստը անյայտ է: 12 գիւղ ջնջուած են Տաւրիկի գաւառին մէջ, չի գիտցուիր Գիւրտերէն թէ ապստամբուին:

Թիֆլիս 4 մայիս

Սասունէն կը հեռագրեն թէ Պատիկանը քիւրտերը հայ Դաշակէքէ 1) գիւղը թալիւր եւ յետոյ, 200 հոգիի չափ ճանապարհուր են զէպի 4էկէկէտման 1) հայ գիւղը, Բայց Սասունցիք վրայ հասնելով ցրուել են զանոնք, 2) քիւրտ եւ 1 հայ սպանուել են:

(Իրօ Արմենիա)

Լօզան 14 մայիս

Պաթուկէն հեռագիր մը կազիր ալ Լօզանի կը տեղեկացնէ թէ, Պիթլիսէն որուած տեղեկութեանց համաձայն 700 թիւրք զօրք եւ 90 հայ ըսպաննուած է: Կանոնաւոր ապրիլը անկարելի է: Սն զեղջններու գիւղերը կրկնապատկուած են, հայ բնակչութեան սով կը սպասուայ:

Հակառակ ասոր, հարկահաւաքները օսէն կերպ հարստահարութեանց կը դիմեն եւ կառավարութիւնը կը ստիպէ բնակիչներուն որ չնորհակալութեան օւղերմներ ստորագրեն:

(Իրօ Արմենիա)

4. Պոլսի 8 մայիս

Թիւրք զօրքերը Հասան-Վալէն գըրաւած են, պարսկական սահմանադիրին մօտ: Յեղափոխական շարժումը մարտու մօտ կը բռնայ, թուրք կառավարութեան կորովի միջոցներուն շնորհիւ:

(Յոսանք, Յայրուկ)

ԿՈՏՈՐԱՅԻՆԻ ՍՊՈՒՆԱԼԻՔ

Հայաստանում. — Սուլթանը կըր կին է ձեռք առնում վրէժխնդրութիւնը, երեք պետութիւնների անմիջական գործողութիւնը. Ռուսը միանում է Թրանսային եւ Անգլիային:

(Լր Մարտի 14 մայիս)

Այս վայրկեանում երբ հանրութեան ամբողջ ուշադրութիւնը կեդրոնացած է այն ընդհարումի վրայ, որը գեղին եւ սպիտակ ցեղերին պայքարի մէջ է մղել թուրք է թէ Ռուսքիան իրեն նըպատակ է դրել ներպային զբաղելու ստիպել յարատեւօրէն ծնվող Արեւելեան խնդրով:

Վերջապէս կարելի էր կարծել, թէ պետութեանց Պոլսոյ դեսպանները, Բ. Դոնից դժարութեամբ կորցելով միջազգային ժամտարմէրիայի պաշտօնի անցնելը Մակեդոնիայում, յաջողել էին գոնէ ժամանակաորայէս խաչալուծիւնը սպառնով մահմէտականների եւ քրիստոնեաների միջեւ: Բայց բոլորովին այդպէս չէ: Դիւանագէտների Մակեդոնիայում յաջողութեամբ պըսկված ջանքերը Հայաստան են տեղափոխվել:

Իուլիար, սերպ, ռուսէն եւ յոյն քրիստոնեաները կարող են թուրք վարչութեան անիրաւութեան վերջը տեսնելու յոյր ունենալ. իսկ հայերը սպասում են իրենց ալիւնով վճարել Միւրցըսէզ ձգրագրի իրագործման փոխարէնը:

Երեկ Պոլսից եկած մի հեռագիր հստորում էր որ թուրք զօրքերը Սասունի գիւղերը շրջապատելով զբաւել են, իսկ ֆէդայիներին: — հայ ապստամբներին հալածել:

Սասունի հայ գաւառը, որ սկսվում են գործադրվել բռնութիւնները, շատ լեռնոտ է:

1896ի, կոտորածի ընթացքում այդ գաւառը քրիստոնեաների դիմադրութեան կեդրոնատեղի էր: Դիւրաբար եւ թիւրքերը շէին համարձակվում այդ տեղում արկածներ ստեղծել:

Արդէն երկու ամիս կայ որ դեսպանները ստիպված եղան թիւրքիային դիմումներ անել զէպի Հայաստան ուղղված զօրքերի շարժման դէմ. բայց Բ. Դոնալ, ինչպէս միշտ, պատասխանեց խուսափողական յայտարարութիւններով:

Այստեղ տեղի ունեցած իրողութիւնների հանդէպ միանային, Անգլիայի եւ Ռուսիայի դեսպանները նախաձեռնարկում են իրենց հիւպատոսներին ուղարկել Երզրում քննութիւն կատարելու Սրանց փութկոտութիւնը նկատուին նախով. պետք է յուսու որ ժամանակին կը հասնին եւ կը կարողանան առաջը առնելու մեծ արիւնհեղումի, որ ըստ երեւոյթի նորոշել է Սուլթանը. Այն աշակցութիւնը որ Ռուսիան անմիջապէս ցոյց տեց միանային եւ Անգլիային Հայաստանում գործելու համար, մի իրողութիւն է որ պետք է նկատու առնել: 1896ին իշխան Լօբանովը, Ալէքսանդր երորդի արտաքին գործոց նախարարը, մերժել էր Անգլիայի հետ միացած միջամտել հայկական գործերի համար: Այս պայմաններում թոյլատրելի է ենթադրել որ մօտերս Լօնդօնում տեղի ունենալիք կօնգրէսը, երեք մեծ պետութիւնների համաձայնութեամբ վաւերացված պետք է տեսնի իր որոշումները: (\*)

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Այստեղ յառաջ կը բերենք այն տեսութիւնը, որ Վիէնայի «Ինֆորմացիօն» թերթը կընէ Աւստրիոյ ներքին գործոց նախարարի խօսած վերջին ճառի հիման վրայ.

«... Թիւրքիոյ հանդէպ — կըսէ «Ինֆորմացիօն» իմիջի ալոց — նախարարը խօսեցաւ վերջապէս այն շեշտով, որը միայն Կ. Պոլսոյ մէջ»

Ե. Ի. «Պրօ Արմէնիայի խմբագրութիւնը այս յօդուածը պաշտօնական չըջանակից ըղիսած է համարում:

պիտի հասկցուի: Նախարար կարճ  
ու չոր խօսքերով քառ, որ թիւր-  
քիա իր գոյութեան խնդրի հետ կը  
խաղայ, երբ նա չարութեան հետ կը  
խնայասկան քաղաքականութիւնը:

Միւրջը թէ կէն առաջ, անկէ շատ  
առաջ ամէն մարդու համար, որ  
թիւրքիան կը ճանչնայ եւ մտաւո-  
րապէս գիտէ թէ Արդիւլ-Համիդի  
գլխին մէջ աշխարհը ինչպէս կը դառ-  
նայ, պարզ էր թէ քաղցրութեամբ  
խնդրելով, սողօքներով, բանաւոր  
պատճառաբանութիւններով Կ. Պօլսոյ  
մէջ բան մը առաջ չերթար: Թիւր-  
քիան կամուտը կէրպով երբէք չի  
հնարանդիր: Թիւրքը չուզեր բարե-  
կարգուիլ, որովհետեւ ամէն եւրո-  
պականացում անոր համար չարիք  
մըն է, որովհետեւ ան հոգով հակա-  
ռակ է այն միտքին, թէ քրիստոն-  
իան մահմետականին հետ հաւասար  
իրաւունքներ կարող է վայելիլ:

Թիւրքին վրայ միայն մէկ բան  
կազդէ, այն ալ բռնի ոյժն է: Երբ  
նա գիտնայ թէ դիմացինը աւելի  
ուժեղ է, այն ատեն ան կը հնա-  
զանգի ճակատագրական հլուութեամբ,  
անկարելիին դէմ թիւրքը չի կռուիր:  
Այս բանը արարատ աշխարհը գիտէ  
եւ այս սկզբունքով գործած են բո-  
լոր այն մեծ դիւանդէտները, ո-  
որոնք ուզած են թիւրքերոյ մէջ բան  
մը ընել: Թիւրքերը եւ մանաւանդ  
Արդիւլ-Համիդը կը խոնարհին միայն  
անխնայ եւ ամուր գիմացկունութեան  
մը առջեւ: Կոմս Փօլուխովսկի կար-  
ծեց, թէ կոնստանդնուպոլսոյ խօսքերով  
պիտի կարողանայ բան մը ընել:  
Արդիւլը չայն եղաւ, որ որ այսօր  
Միւրջը թէ կէն ծրագրէն չորս ամիս  
վերջը գրութիւնը մնացած է նոյնը:  
Այսուհանդերձ նորէն գոհ ըլլալու  
ենք, որ գործուած սխալը վերջա-  
պէս կը տեսնուի: Եթէ ճաշի այս  
չեչուր պահուի եւ զայն գործի վերած-  
ւի, այն ատեն կարելի է Մակիդոնիոյ  
համար բան մը յուսալ:

Փօլուխովսկի այս ճառը, որու  
վրայ իմնուած է ներկայ տեսութիւ-  
նը, Ելլալը վրայ գործած է շատ  
վատ ազդեցութիւն եւ հոն մեծ ի-  
րարանցում յառաջ բերած:  
«Թան» աւստրիական նախարարի  
խօսքերը մէջ բերելով կը քննադատէ  
իր առաջնորդողին մէջ պետութիւն-  
ներու բռնած թոյլ քաղաքականու-  
թիւնը Մակիդոնական եւ Հայկական  
հարցերու հանդէպ: Հոն կապացու-  
ցուի թէ մակիդոնական հարցը շուր-  
հիւ Սուլթանին նենգ միջոցներուն  
վերջնականապէս դարձած է ոստի-  
կանական կազմակերպութեան ան-  
ձայր կատակերգութիւն մը, եւ հի-  
մա երբ Հայաստանէն խոռվայոյց  
լուրեր կը հասնին ու ֆէդայական  
կոթիւններու մասին կիմացուին նորէն

հրապարակ յերեւոյժ Հայկ. Հարցը,  
պետութիւնները կը ջանան միջամ-  
տելութեամբ մը թիւրք կառավարու-  
թեան եւ Անդրաբլիկի միջեւ հարաու-  
թիւն կայացնել, փոխանակ խնդիրը  
իրենց ձեռքը առնելու եւ անոր վերջ-  
նական լուծում մը տալու:

«Ինֆորմացիօն», «Թան» ալ կը  
չեչուէ թիւրքերոյ հանդէպ խիստ քա-  
ղաքականութեան մը եւ լուրջ գոր-  
ծունէութեան մը անհրաժեշտութիւ-  
նը:

ՆԱՄԱԿՆԵՐՈ ՔԱՐԵԿԱՍՏԻՍ

Բ.

Սիրելի Արմէն,

Օրերը որքան չլուտ կանցնին,  
կերթան, կարծես դեռ երեկ էր որ  
գրեցի քեզի, ու այսօր դարձեալ նայն  
հարկին մէջ է որ կը գտնուիմ քեզի  
ըրած խոստմանս վրայ հաւատաւ մի-  
շուտ համար: Ուրախ եմ որ նամակէս  
չատ գոհ ես մնացած, ու կուզես որ  
չատ ու միշտ գրեմ, է՛ն մեծ հաճոյ-  
քը, է՛ն մեծ մխիթարութիւնը մի-  
այնութեանս վայրկեաններուն քեզ  
հետ խօսելու մէջ է որ կը գտնուիմ գըր-  
չիս միջնորդութեամբ: Օտարը՝ որմէ  
չըջապատուած ենք, երբէք չի հասա-  
լորքերու մը միջակով ու անոր  
հասկացողութիւնը չէ կարող թա-  
փանցել մեր ներքին աշխարհին մէջ:  
Երբ մեր ցաւը ուզեցք պատմել ա-  
նոր, ան երեսը մէկդի կը դառնէ,  
սկանչները կը գոցէ ու չի լսէ մեզի ու  
սրտնեղութեամբ կը հեռանայ մեզմէ:  
Կը լքէ զմեզ երբ ո՛ր եւ է յոյս դնենք  
իր վրայ: Ան օտար է, միշտ օտար.  
պէտք է խոյս տալ անկէ, պէտք է  
հեռու մնանք անկէ, եթէ չենք ուզեր  
ձաղրի առարկայ դառնալ, ու անոր  
թունաւոր քամարանայք արժանա-  
նալ...:

Սիրելիս, կը փափաքիս որ Լոնտո-  
նի հայ կեանքէն գրեմ քեզի. կու-  
զես գիտնալ թէ ի՞նչ փոփոխութիւն-  
ներու ենթարկուած է ան երթալիդ  
ի վեր:

Այժմ հոս բոլոր հայերն ալ արթն-  
ցած են, վերջապէս ժամանակի պա-  
հանջին տեղի տուած՝ Լոնտոնի հայու-  
թիւնն ալ սկսած է գործի, երկար  
ու ծոյլ քունէ մը վերջը...  
Ու խառնակութիւն մը, խառնի-  
ճաղանճ իրարանցում մըն է որ կըս-  
կաի, ոմանք իրենց դեռ, պարտա-  
կանութիւնը կատարելու տեղ կու-  
զեն ծոյլ ու իմար կանգնուած ունե-  
նալով միայն ու միայն հրամայել,  
ուրիշներ չեն զիջանիր խօսքեր փո-  
խանակել իրենց դերակատարներուն  
հետ, որովհետեւ գիտեն թէ իրենք  
մե՛ծ, շատ մե՛ծ անձնաւորութիւններ  
են. փորը տնկած օմեծ աղաներո՞ւ ա-  
մօթ չէ՞ միթէ այդքան ցած իջնալ,  
այդքան ոտորնանոյլ, ո՛չ. անկարելի  
է, ոճիրը մըն է իրենց դատողութեամբ:  
Ու բեմին վրայէն մէկդի կը քաշուին,  
կը մեկուսանան անամօթաբար: Ուրիշ  
մաս մը, գիտակից երեսնք վիճակին  
ու պարտականութեանցը, այս բոլո-  
րին ակնատես, կուզեն իրերուն կա-  
նոնաւոր գրութիւն մը պարգեւել,  
չի խայտառակուիլ ու ամօթով չեղալ:  
Իայց անօգուտ, իրարանցումը, իրար  
անհասկացողութիւնը աւելի կը շատ-  
նայ, ու կարճ ժամանակի մը մէջ Բա-  
բելոնեան խառնակութիւնը կը պայ-  
թի, բազմաթիւ մին միւսին հակա-  
ռակորդ խումբեր կը կազմուին ու  
փոխանակ համերաշխութեամբ իրենց

պարտականութիւնը իրագործե-  
լու. վայնասունը, կուրը լուսանք-  
ները կը տեղան կը բազմապատուին,  
ե քու աչքիդ առջեւ կը պատկերա-  
նայ ընդհանուր խայտառակութիւնը:  
Ու այսպէս Լոնտոնի հայութիւնը  
գործի կը սկսի:

Բայց արդիւնքի տեղ զնաս է որ կը  
հասցնեն իրենց առաջին քայլով, եւ  
որքան ծուռ եւ սխալ է այդ առաջին  
քայլը, որը չես կարող շտկել, ուժ  
գորութիւն կը պակսի քեզի հա քա-  
ելու զանոնք եւ ուղիղ ճամբուն վրայ  
հաստատուելու: Ու անոնք յառաջ կեր-  
թան, կամայականօրէն հակառակորդ-  
ներ ստեղծելով իրենց շուրջը, որոնք  
կը շատնան ու՛րջը բազմաճան:

Անօգուտ գործը, պարտաւ ջանքերն  
ու աշխատութիւնը արդէն զնաս կը  
պարտնակեն իրենց խելութեանը մէջ.  
Լաւ է ոչինչ ընել, քան թէ անօգուտ  
կամ զնասակար գործ մը կատարել:  
Եւ ետանդ մը սկսած է, փափաք  
մը ձագած է այստեղի հայութեան  
սրտին մէջ որը ամէն տեսակ ջանքե-  
րու հետ միացած անոնց իրականացու-  
մին կը ձգտին: Զանքեր, աշխատու-  
թիւններ ու զոհողութիւններ որք  
չեն յարժեր նշնիսկ սանթիմ մը:

Հրճուէ, սիրելիս, երբ որ կրկին  
բազը՝ ունենաս Լոնտոն ինչալու՝ հոս  
պիտի գտնաս հայկական մատուռ մը,  
այն քանակ մը որ կարողանաս  
հողիդ փրկութիւնը! գտնելու գի-  
րութիւնը ունենալ, երջանիկ համա-  
րէ ինքզինքդ, ինչու որ հոս այն հա-  
յերը որոնք անհաւատութեան յաւի-  
տենական կորստի ճամբուն հետեւելու  
հակամարտ են, պիտի տեսնան մուծին  
մէջէն կենսատու! Լոյսը որը կարող  
պիտի ըլլայ գիրքէ տանելու դէպք  
վերին անտեսանելի ճանապարհները  
որոնք կը վերջանան երանաւէտ աշ-  
խարհին ցնորական երջանկութիւնե-  
րուն մէջ. սակայն այս կեանքէն  
վերջը... եւ քեզի ալ ժառանգի պի-  
տի ըլլայ ադ ճամբուն հետեւելը...:

Մայիս 8-ի կիրակին էր. հրաւի-  
րագրի մը առաջնորդութեամբ երկու  
ընկեր գլխեցինք մ'յն սրահը՝ ուր  
ժողով պիտի գումարէին մեր ջոյ ազ-  
գայինները եւրոպայի հայոց առաջ-  
նորդի ներկայութեամբ եկեղեցական  
արդէն սկսած խնդրին յաջող ելք մը  
տալու: Սիրելիս չե՞ս գործնարկ երբ  
ըսեմ թէ բաւական թիւով հայեր  
ներկայ էին, մանաւանդ մեր փորը  
տնկած ազգաներէն:

Մեր առաջնորդը ձեռքը գլխին,  
փորը դուրս ցցած, բերանը ծուռուր.  
կելով հանդիսականներու հանդէպ,  
կարծես վերին արքայութեան փառ-  
քը մտաքած, վարի աշխարհին ունե-  
ցած եւ ունենալիք հաճոյքի լծին մէջ  
կը լողար իր երեսակայութեամբ:  
Իրմով զբաղուելու երբէք նեղութիւնը  
յանձն պիտի չառնէի ժամանակս վատ-  
նելու իրեն համար, միեւնոյն ժա-  
մանակ քեզի ալ ճանճարցնելով. բայց  
պահանջէ որ այս տեսակ պոտաւորած  
ները չի շարունակեն իրենց թունա-  
ւորիչ ճամբան, ուրիշ յառաջ կեր-  
թան, կը հետեւին իրենց ուրիշ շա-  
տեր ալ ոչխարամիտ ապուշ խոհմու-  
թեամբ: Որ ատեն որ պատահութիւ-  
նը ներկայանայ պէտք է կ'ից մը ի-  
ջեցնել անոնք փառած ուսերուն ու գը-  
լորել զանոնք պատահութեան դաշ-  
տավայրէն հեռու, քարտեղներու մե-  
նութեանը մէջ, ո՛ւր ի՛նչ որ կուզեն  
թո՛ղ ընեն. իրենց անձը, էութիւնը  
մեզի համար կարեւորութիւն չունի,  
կը բաւէ որ ամբողջ պատահութիւնը

զատենք ինննյով որ իրենց թոյնով  
չի թունաւորեն:

Մի քանի ամիս կայ որ եկեղեցա-  
կան շարժումը սկսած էր հոս. մեր  
մոճապահան աղաները ազգային այն-  
քան նուրբ նախանձախնդրութիւն  
ունին որ՝ առանց ազգային ուրոյն  
եկեղեցի մը, առանց տէրտէրի մը  
կամ հոտած վարպետի մը իրենց  
ազգային սուրբ աւանդութիւնը չեն  
կարող պահպանել, եւ պէտքը կըզգան  
սէրաբէրի մը որ սուր միութիւնն հա-  
տատէ իրենց եւ իրենց ազգակիցնե-  
րուն միջեւ: Հոգիս, զարմանքը չե՞ս  
ունենար միթէ լսելով թէ ջոյ ազգա-  
մը գաղափար կամ փափաք! Բսեմ, կը  
յայտնէ սէր եւ միութիւն ու համե-  
քաշխարհիւնն հաստատելու մեղ չման  
«անխոհեմ», «առաք զընթ», «անհա-  
ւատ» երիտասարդներու ու իրենց  
վեհափառութեան! միջեւ: Եւ այս  
տեսակ ցնորական նպատակներու հա-  
մար 200 անգը. ոսկիի դուրսը մը  
հասաքած են, ու սյգ ժողովին մէջ  
օրոյնեցաւ թէ առաջնորդը քահա-  
նայ մը կարգէ Լոնտոնի հայութեան,  
որը սկսի իր հոգեւոր պարտականու-  
թիւնները, Հոգաբարձութիւնը ար-  
դէն ընտրուած է, անշուշտ ջոյ ա-  
ղաներէն: Ու արդէն մեր հայ հա-  
րուստներէն ի՞նչ կըսպասենք, եթէ  
ոչ եկեղեցի չընեն ու մատուռ հանգ-  
նել: Անոնք համար ուրիշ տեսակ ազ-  
գային գործ գոյութիւն չունին:

Մոռոյց յիշելու որ մեր պատուար-  
ժան! առաջնորդ Թ. Թիւրքեան այնքան  
զբաղուած է եղեր որ, յայտնեց թէ,  
այսօր հոս Լոնտոն է ու վաղը անա-  
կանկալ զէպքերը այնքան ստիպողա-  
կան կրնան ըլլալ որ չհարկադրուած  
կըլլայ Բարիք գտնուիլ, միւս օրը,  
հոնկէ ալ Մարտի, կամ Մօնթէ-Քար-  
լօ կամ Ամստերտամ եւ դեռ գիտե՛մ  
ո՛ւրերը... անշուշտ կը հասկնաս թէ  
մեր աղա առաջնորդը ստիպողական  
գործ լսելով իր անուշ զուարճու-  
թիւնները մատանջել կուզէ, առանց  
որոնք չէ կարող ըլլալ ան:

Եւ այս տեսակ պայտարը չըլլալս  
ներուն զբաղանները մեր ապուշ ոչ-  
խարամիտ ազգայինները կը լեցնեն որ  
վասնեն, փճացնեն... ի՛նչ հրաշա-  
նէր չի գործեր տո ցոփութեամբ վատ-  
նուած դրամը, եթէ ժողովուրդը գիտ-  
նայ զայն իր արժանաւայելի նպատա-  
կին գործածել... Յեղափոխութեան:

Բայց եկուր Լոնտոնի բազում հա-  
րուստներուն հակացուր թէ հայու-  
թեան այժմեան պայտելիք աստուածը  
յեղափոխութիւնն է, որոնք միայն  
պէտք է աւարտ կանգնենք, եւ ո՛չ թէ  
անիկա կարողանան լատուածոյն որը  
անկարող էր ու է իրեն տաճանները  
զերծ պահելու կործանուած ու պղծու-  
մէ անարգ իսլամին ձեռքով...:

Իսկ ան տաճարը որ կը կանգնենք  
Յեղափոխութեան համար, այդ սուրբ  
տաճարը մի՛շտ ապահով է ու հա-  
տատ Յեղափոխութեան անրկեկի  
ուժի հովանաւորութեան տակ:

Բայց հոգ մի՛ ընէր, սիրելիս, մա-  
մանակը ամէն ինչ կը փոխի:

Քոյք  
Վարդ ԵՆ

Մայիս 13 1904

Լոնտոն

ՅԻՆԻՊԵՏԻ ԹԱԿԱՅԻՆ ՎԱՐՃԱՐՈՆԵՐ  
ՓԱՆՈՒԱԾ  
—)o(—

Տղան և ետասէր մարդոց արդէտ  
գործերու շարքն է որ կը ցու-  
ցարուի այսօրերս, շնորհիւ էն-  
թրիքան պատուելիի մը գոյու-  
թեան:

Նախարարութիւնէն եկած հրա-  
մանին մասին գրեցի ճարտուած-  
ին:

Մեր հոգարարութիւնը, ինչ-  
պէս կերեայ, հեարընք ելնիւ  
կրող կառավարութեան հետ կը  
համակերպի ազգին 700 լէվերը  
պարսպ տիպը տալ, բայց չուզի  
ընդունիլ օրիորդը:

Ասոր վրայ ամուսյ 7ին ոտա-  
կաններ կուգան վարժարանները  
կը փակեն ու բանալիները կը տա-  
նին:

Աս խայտառակութենէն կը  
տուժէ ամեն բանէ առաջ հոգա-  
յին արժանապատուութիւնը և  
կը թակուն հաստատութիւնները  
ընդհանուր ամամբ, ինչ որ բ-  
րանելու և զգալու կարողութենէն  
զուրկ է, ինչպէս կերեայ, հո-  
գարարութիւնը:

Վարժարանական տա շրջանը  
բոլորովին մեռած է արդէն տղոց  
համար, և կրօնը չէր որ պիտի  
տուժեր բնականաբար, քանի որ  
ան ապրելու հոգը ունի միայն և  
տարւոյն մէջ 2-3 ամիս ան շա-  
խատեցաւ, բայց ամապճարները

առաւ 150 ու 180ով... Հոգա-  
բարձուներուն ալ հոգը չէ. մար-  
դիկը սոխ չեն կերած որ սրտեր-  
նին այրի, ոչ մէկը վարժարա-  
նին մէջ տղայ չունի, ունեցող-  
ներն ալ կարողութեան խամրոցը  
կը դրկեն որ շուկայէն երթան  
որքայախ բերն, փուռներէն ալ  
պիտի վէճ:

Մտահոգութիւն պաճառողը  
ասոնք չեն, այլ այն որ մեր կը-  
թական յորկերուն շուրջը յա-  
րուցուած աս խնդիրները պատ-  
ճառ պիտի ըլլան որ օր մը կա-  
ռավարութիւնը խլէ ադ մասին  
վայելած ազատութիւնն ինչ և ուղ-  
ղակի միջամտէ մեր գործերուն:  
Ան ատեն ալ խերը տեսք:

Եւ ինչպէս կերեայ, աս պէ-  
լուն ալ Ֆիլիպէի հոգարարու-  
թեան ձեռքէն պիտի ելնէ, քա-  
նի որ անոր մէջ կը գործէ «նա»  
և էնթրիքան պատուելիներէն  
խարուելու տղիտութիւնը:

Երկրորդ ցուալի կէտը ան է  
որ, հայ վարժարանի մը հան-  
դէպ եղած աս դէպքը—շնորհիւ  
մեր հոգարարու ազաներու իշ-  
կիզարութեան— ամբողջ տեղ-  
ւոյս հայութեան անպատուարե-  
րէ:

Ո՞վ տուաւ հոգարարութեան  
ադ իրաւունքը որ ամեն բան ու-  
ղածին պէս առնէ ծախէ:

Ընդհանուր դժբաղդութիւն մըն  
է դարձեր կարծեո, որ մեր հո-  
գարարները իրենց թանձր տը-

գիտութեամբ և ետականութեամբ  
պատահաններ կը դառնան: Բուէ  
տուր քանի մը մարդոց և ադ  
մարդիկը պաշտօնի անցնելուն  
պէս հանրային օգուտը չի մտա-  
ծեն, բոլորովին հակառակը ըն-  
թանան ժողովուրդին օգտին: Աս  
ինչ խայտառակութիւն է: Ձեռ-  
քերուն զայ, «տէյնէկ» մըն ալ  
պիտի առնեն ժողովուրդին զը-  
խուն իջեցնեն:

Իսկ ձեռքներու անտարբերու-  
թիւնը, Աստուած իմ, մարդ  
կապեցնէ:

Թաղային վարժարանին շուրջը  
աս ո՞րքան շարխեր է որ դար-  
ձաւ, ո՞րքան տուժեցին տղաք-  
ները, և ո՞չ մէկ բողոք ձեռք-  
ներէն: Կերեայ բոլոր հասկող-  
ները ուրիշ վարժարաններ կը  
դրկեն տղաքներն:

Բայց շատ խօսքէն ետքը ի՞նչ  
պիտի ըլլայ աս դրութեան վեր-  
ջը, աս էնթրիքները և՞ որ պիտի  
զադրին, և՞ որ պիտի վերնայ  
զայլ թաղութեան քարը:

Ի՞նչ կը մտածեն աս ամենուն  
վրայ թաղական հոգարարներն-  
ըր, Տեսնե՛ք իրենց քայլերը:  
Թղթակից

Ա. Զ. Գ.

Պարկուզէն մեզ կը խնդրեն յայ-  
տարարիւ, որ մեր ընկեր նորոգ հան-  
գուցեալ Մովսէս Փափազեանի հաս-  
ցէին այլեւս նամակ չը գրուի, ո-  
րովհետեւ կառավարութիւնը կը գը-  
րաւէ մեռածներուն նամակները:

«ԿՐԱԿՈՏ ԶՈՒՐԸ»

(Սիրիի կեանքից)  
(Քարգ. ոռուերհից)  
Գ.  
(Նար. Ասիոյ դ թիւն)

Հիւրերը շուրջ բոլորած ձուկ և  
կը շերտի միս էին ուսում, որը  
ճարտիկ էակագիրը մեծ երկայնէ  
ափսէներով մատուցանում էր Իրանց:  
Բոյազիրը իր հիւրերին, որոնք ե-  
կել էին պատուելու նոր աշխատա-  
րի աշխարհ գալը, լաւ հիւրասիրից:  
հասարակ ինչը խմում էին շա-  
քարով և ցորենից պատրաստած այն  
պիտի հրաշալի կանանչադոյն պաք-  
սիմաթով, որը յիշեցնում էր տունը-  
րայի գարնան զարգարանքը: Պաք-  
սիմաթից իւրերը հագում էին. իսկ  
նիկուլան մի յիմար երիտասարդ,  
նոյնիսկ ոչ գովասանական մի կար-  
ծիք յայտնեց ուսական ճաշակի մա-  
սին, որը բոլորովին հօճեթի շեղաւ  
ձերուներին:

—Թուսները շատ սուճուր ակունքեր  
և ո՞վ գիտէ ինչ տեսակ կողորդներ  
պէտք է ունենան միշտ այս սեռակ  
բան ուսելու համար, սոնց պաքսի-  
մաթը կը ծոռեղով: Եթէ ինձ վիճա-  
կուէր ամէն օր այստեսակ յիմար բան  
ուսել, ևս ի՞նչ ամսվան մէջ կը մեռ-  
նէի:

Մերուները սոյր կարծիքը ազա-  
տամտութիւն համարեցին և ոչ քա-  
լաւերոց ձեռով չլրուխները շարժեցին:  
Նրանք բարեխոսքար պաքսիմաթ-

նրեր ուսում էին վրան թէյ խմելով,  
լաւ էին միսն էլ, ձուկն էլ, կա-  
նանչ պաքսիմաթն էլ, բայց ամէ-  
նից լաւ օղին էր: Բոյազիրի խրճի-  
թը դրախտի կը վերածվէր, եթէ  
օղին չը վերջանար Բայց օղին վեր-  
ջացաւ, պէտք էր կամ աները ցրվել,  
կամ թէ նորը ճարէր:

Բոյազիրը որոշեց կրկին ճարել,  
թէ և կրնը հակառակեց սոյդ որոշ-  
ման, և հովին ուղարկեց Լանդուրի  
ժոտ. նա հովին Լանդուրի համար  
աւեց շնիկներու տաս մարթ. իսկ մը-  
նացորդի համար խնդրեց նշանակել  
սետարակի մէջ խոտանալով այսիտ-  
եան վճարելու:

Կրակոտ ջուրը լիւրով հիւրերի  
ստամոքսներին մէջ. նրանց խոսեցնել  
տեղց: Նրանք ամենքն միանգամից  
սկսեցին խօսել, և իւրաքանչիւրը  
առանձին նիւթի մասին, որովհե-  
տեւ կրակոտ ջուրը իւրաքանչիւրի  
ախանջում առանձին խօսք էր ստում,  
և ամեն մէկը հաւատարմով ադ խօս-  
քին երեւակայեց, որ խօսքը արդէն

գործի է վերածվել:  
Կրակոտ ջուրը Պետրոսի նիկուլ  
Սուչադայի երգորը. մի աշխատա-  
սէր և հեզ երիտասարդ, ականջին  
ասած խօսքը ստիպեց նրան երեւա-  
կայիլ որ ինքը պարզ սամօեղ չէ,  
այլ տանուէր, և ադ պատճառով  
էլ ամենքը պարտաւոր եւ մտիկ ա-  
նել, և Եւսի երբ նա խօսում է:  
—Լաւ, լուի գոտում էր նա, ևս  
ևս պէտք է ձեռք հրամայել:  
Բայց ոչ ոք լսել չէր ուզում, այլ  
իւրաքանչիւրը ուզում էր հրամայել,  
Այդ միջոցին Պետրոսը իր ամբողջ  
ուժով գարկեց ամենաձուլիկ դալու-  
երեսին, որի երեսը այնքան լայն  
էր որ Պետրոսի ձեռքը նպատակից  
չը շնչվեց: Ձեռքը մտաւ ինչ որ կ-  
կուց իրի մէջ և խոնաւացաւ, իսկ  
տուժող սամօեղի երեսը ծածկվեց  
ձեռքերովը:

—Ես տանուէր եմ, տանուէր,  
գոտում էր Պետրոս բուռնցքները շորս  
կողմ թափահարելով:

Այդ միջոցին այն ամենքը, որոնք  
Պետրոսին իբր տանուէր չէին ու-  
զում ճանաչել, յարձակվեցին նրա  
վրա, կապկպեցին փոկերով և որո-  
շեցին տունը քնելու ուղարկել: Բայց  
նա քնել չէր ուզում, այլ հրամայել:  
Այդ պարագային նրան կապեցին  
սահնակից և սուճ տարին, այնպէս  
որ նա գետնի վրայով քաշվելով գը-  
լալով գետնի կոշտերին էր դիպում:  
Լաւ որ կոշտերը ծածկված էին ձիւնէ  
փափուկ բարձրով, և Պետրոսի տունն  
էլ հեռու չէր, եթէ ոչ տանուէրի  
զրուխը կէս ճանապարհին ջարդ ու  
փշուր պէտք է լինէր:

Կրակոտ ջուրը լցվելով հիւրերի

ՄԻ ԱՂՏՈՏԻ ՀՈՄԱՐ  
—o—

Ֆիլիպէի այսօրվան թղթակե-  
ցութիւնից մեր ընթերցողները  
կիմանան, որ ազգային վարժա-  
րանները ապիկար և մի ստար  
ալարածի ձեռքում գործիք դար-  
ձած հոգարարութեան ու թա-  
ղականների շնորհիւ, որոնց մէջ  
կան մի երկու հոտած  
«լէշեր», քոցված են կառավարու-  
թեան ձեռքով:

Ֆիլիպէյում իրեն մի յարմար  
շրջանակի մէջ բուն զբաժ  
կրօն Միքայէլեան կոչված ա-  
րարածը իր ստոր հոգուն յա-  
տուկ ինտրիզները այն աստի-  
ճանի հասցրեց, որ վերջապէս  
պատճառ դարձաւ կառավարու-  
թեան դեռ չը տեսնված միջա-  
մտութիւնը առաջ բերել, և ուս-  
տիկաններով գպրոցները գոցել  
տալ:

Մենք հոտած լէշերի վրա չենք  
զարմանում, բայց զարմանում  
ենք Ֆիլիպէի երկտասարդու-  
թեան վրա, որը սֆինքսի ան-  
տարբերութիւն պահելով մինչեւ  
օրս չը կարողացաւ կրօնի պէս  
սողունի պոչից բռնել և դուրս  
նետել ազգային հիմնարկութեան  
սեմից, ու այսօր սկսել է լալ  
գպրոցների փակման համար:

Լացէք, տեղի է. որովհետեւ  
գուր չը կարողացաւ, կամ ժա-  
մանակին չուզեցիք գոճու վանել

ստամոքսների մէջ, նրանց և երգել  
ստիպեց: Նրանք բոլորն էլ միասին  
երգել սկսեցին և այս անգամ մի-  
եւնոյն երգը: Նրանք երգում էին  
որ Լանդուրի մեծ բարերար է բոլոր  
սամօեղների համար, որովհետեւ նա  
իր կրակոտ ջրով ուրախացնում է նը-  
րանց սրտերը և կարիքով ու հոգ-  
սերով ծանրաբեռնված հոգիները լու-  
սաւորում: Եւ ի՞նչ է վերցնում որ  
նա այդ ամենի համար: Ողորմեի չը-  
նիկների մարիեր, որոնք ոչ մի բա-  
նի պէտք չեն գալիս, բացի շնայիկ-  
ների կարներին կարելուց. որովհե-  
տեւ եղջիւրի մորթուց աւելի լաւ  
ինչ կարող է լինել զգալուի համար:  
Նա վերցնում է ձուկ, էն ինչ կայ  
ոչ, լճերի մէջ ձուկ շատ: Նա վեր-  
ցնում է և եղջիւրները. բայց չէ որ  
տունդբայի մէջ շատ մամուռ կայ:  
Մեծ իմաստով է ասում հայր Իվանը  
ճամուռ դրէք պարկիս մէջ չէ՞ որ  
մամուռն է եղջիւրները ծնում:

Այսպէս ամէնքն էլ երգելով գովա-  
բանում էին Լանդուրին, միայն տա-  
րիների բնան տակ կորացած Մար-  
սալոն (պղնձէ մարդ) այլ կերպ էր  
երգում, և այնքան լուռ որ ամէնքն  
էլ, որոնք Լանդուրին էին փաստա-  
նում լոցերն, և սկսեցին սկանջ  
դնել:

Իսկ Մարսալոն երգում էր տխուր  
երգ, և նրա երգածը ծանր քալի  
նման պարկում էր ուղիղիւրների սըր-  
տերի վրա:

(Շարունակելի)

այն մարդին, որը այսօր այդ մեծ ցան է պատճառում:

ՎԱՐԴԳԻՍԸ

Մայիս երկուսին, եւրոպական տոմարով, Պոլսէն կը հաղորդեն որ Փրանսիոյ զեպպանի փոխանորդ Պ. Բապսթ պատերազմ է դեպքան ստան առաջին քարտուղարին պաշտօնապէս միջամտելով հաղորդել Բ. Գրան որ ֆրանսական կառավարութիւնը կը հետաքրքրուի Վանի մէջ բանտարկուած և կախաղանի դատապարտուած Վարդգէսի վիճակով, և խնդրել թուրքերոյ արաքին գործոց նախարարէն որ հետախուզէ այս խնդիրը իր պաշտօնակից արդարադատութեան նախարարին քով: Կարելի կը թուի որ մահուան վճիռը մեղմացուի: Կը պնդեն որ ֆրանսական գործակատարին միջամտութիւնը արդիւնք է Բարիզէն զըրկուած հրահանքներուն, և նախարարապետ Պ. Էմիլ Կամբ կրնայ Պ. Տէլկասէին հետ բաժնել այս մեծահոգի նախաձեռնարկին պատիւը:

(Բրո Արմենիա)

ՀԱՆՊԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ի ՆՊԱՍՏ 2. Յ. ԴԱՇԵԱԿՈՒԹԵԱՆ

—)(—)

Պուրկազէն մեզ կը հաղորդեն որ այնտեղ ի նպատակ Դաշակցութեան հանգանակութիւն սկսուած է և արդէն 600 լէվէն աւելի հաւաքուած է: Հանգանակութիւնը դեռ կը շարունակուի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Տէյլը Մէյլ\* թերթին Գոպէէն (ճարտական գլխաւոր բանակատեղին) կը հեռագրեն որ ճարտական վերջի կորուստները զօրեղ տպաւորութիւն գործած են ճարտարի մէջ: Ինչանսգոյ հանրային հաստատութեանց դրօշակները կէս բացուած էին: Բոլոր հանրային հիմնարկութիւնները գոցուած էին: Շատ մը թատրոններ նոյնպէս պատերազմի դաշտէն եկած այնչափ լուրերու պատճառով գոցուեր են: Պաշտօնական տեղեկութիւնները ճարտարներու վերջին յաջողութեանց

մասին չեն կրցեր զգալի չափով հանգստացնել ժողովրդի տխրութիւնը: Ընդհանրապէս կօպէի մէջ կը հաւատան որ պատերազմական երկու նաւերուն կորուստը, թէեւ բաւական խոշոր ճարտար համար, չը պիտի կրնայ արգելք հանդիսանալ ճարտարներու յաղթական յառաջխաղացումին:

—Նոյն անգէն, նոյն թերթին կը հեռագրեն, որ երկու գլխաւոր բանակներու մէջ ալ եռանդուն պատրաստութիւններ կը տեսնուին մեծ ճակատամարտի մը համար, որը այսօր տեղի պիտի ունենայ Լեւոնտէնի քովերը: Լեւոնտէնի ռուսական խորամտներու նախնական ձեւը, թղթակիցը կաւելցնէ որ ճարտարական բանակի եռանդը մեծ է: Մանաւանդ հեծելազօրքին, որոնք կը պնդեն թէ իրենց վեց հոգին քան ռուս կազաքի կրնայ դիմադրել:

—«Խայմըզ» թօքիօէն կը հաղորդեն որ ճարտարներու վստահութիւնը դէպի իրենց ծովային ուժերը անխաղտելի են: Ժողովուրդը երկու նաւերու կորուստին վրայ կը նայի իբրեւ պատերազմական բախտի դիպուածականութեան:

—«Տէյլը Նէվա» կը հաղորդէ որ ռուսական յաճախորդները Բորթ-Արթուրէն գուրս ելեր են և կը գործեն:

—Բեթերսպուրկէն մայիս 9ին կը հաղորդեն որ ժէնեւբալ Սախարով տեղեկագրելով Լեթմանք թերակղզին վրայ ճարտական զօրքերու շարժման մասին, կաւելցնէ «հիմակ ճարտարները ամբողջ կը շինեն Բինչայու և Խալէնվան ծոցերու միջեւ, որպէս զի մեզ արգելք հանդիսանան եթէ ռուսները Բորթ-Արթուրէն գուրս ելլալ»:

—Բէթէրի գործակալութիւնը կը հաստատէ որ ճարտարները գրաւած են Գոյթինքը: հոն գտնուած ռուսները քաջուեր են դէպի նիւզվանկ:

—«Խայմըզ» կիմանայ որ Ռուսիոյ պալիկեան նաւատորմի զորքերը 1905ի յունուարին կրնայ ճամբայ ելլել: Իսկ ռուսական տեղեկութիւններու համաձայն մօտ ժամանակներու:

—Մայիս 8ին Տէյլի թերթիք թերթին Մուկտէնէն կիմացնեն որ զօրաւոր ճարտարական բանակ մը կը մօտենայ Մուկտէնի, որը նպատակ ունի ռուսերու նահանջման ճամբան գոցել: Այդ բանակը երեւցել էր Մուկտէնի հիւսիս արեւելեան կողմէն և զիրքե-բուներ է ռուսերու նահանջման ճամբան տիրող բաւձրութիւններուն վրայ: Այսպէս զինուորական քննադատները կը կարծեն որ ադ Քուրքիի զօրաբանակին մասը չէ, այլ անկախ զօ-

րաբանակ մը, որ մարտ 10ին Զիւմպօրի և Խայլուի մօտերը Գօրէայի ցամաքը ելան և անյայտացան:

—Թօքիօէն մայիս 8ին կը հեռագրեն թէ ռուսական Բագատիր պատերազմական նաւը ընկղմեր է ճարտարներու յաճախորդներէն, և ոչ իր թորկի պատճառով, ինչպէս առաջուց տարածայնուցաւ:

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Օտար թերթերը կը նկատեն որ թուրք կառավարութիւնը մեծ ճիգեր կը թափէ իր նաւատորմի զպատրաստելու գործի օգտակար ընելու համար: քանի մը պատերազմական նաւեր արդէն վերանորոգուած են:

—Ռուս և Աւստրիական դեսպանատանց զինուորական կցորդները որ Մակեդոնիա գացած էին վերադարձեր են Պոլիս:

—Պոլսէն «Խան» կը հաղորդեն որ Սուլթանը Պոլսոյ աւստրիական դեսպանին գանգատած է կոլուսովսկիի խիստ ճառին համար: Ինչպէս և Զինովիէվի, բայց վերջինս հանգստացուցած է զայն: Կըսուի թէ Սուլթանը պիտի դանդաղի Մակեդոնիոյ մէջ գտնուած զօրքերուն թիւը պակսեցնել: Աւստրո-Ռուսական դեսպանին Պոլսէն մեկնումը զօրեղ տպաւորութիւն գործած է Սուլթանին վրայ:

—«Պերլին» Թագըլբատ թերթը Պոլսէն կիմանայ որ Ռուստրիական և Ռուսական դեսպաններուն մեկնիլը պատահական դէպք մը չէ, այլ ցոյց մը Բ. Գուրու ստիպելու որ բարենորոգումները շուտով իրագործուին:

ՌՈՒՍԻԱ

Մայիս 9ին պերլինի թերթերուն միտն կը հաղորդեն հետեւեալը:

Բրոնտատին մէջ տեղի ունեցած անյաշող փորձը ճարտարական լրտեսներու գործ չէ. այլ յուսահատական քայլ մը այն ռուս պաշտօնականներու կողմէն, որոնց գողութիւնները բացուած են ընտելութեան մը վերջը:

Գող բարձրաստիճան սպաններն մին ինքզինքը թունաւորներ էր, բայց չէ մեռեր և այսօր հիւանդանոցի մէջ կը բժշկուի: Ուրիշ բարձրաստիճան պաշտօնեայ մը յաջողութեամբ արտասահման փախչիլ:

—Լեհական թերթ մը կը հաղորդէ թէ ճարտարները Մանչուրիոյ ռուսական լեհ զօրքերուն մէջ լեհական լեզուով ապօրտամիլ հրաւիրող կոչեր ցրուած են:

—Բեթերսպուրկէն կը հեռագ-

րեն մայիս 9ին, թէ նախարար Իլէվէի հրամանով «Վասթոք» թերթը պաշտած է, որովհետեւ կառավարութեան վրայ կը յարձակի հրէաները աքսորելու համար:

—Յարը բոլոր այցելած քաղաքներուն մէջ համակրական և մեծ ցոյցեր տեղի ունեցել են:

Մանաւանդ Մուկուայի մէջ ժողովրդին ոգեւորութիւնը մեծ եղած է, որովհետեւ ճարտարական ճարտարութիւններուն լուրը հասած է Յարի հոն ցտնուած աւանդ:

—Մայիս 6ին Սախայէ վիլէն նա կը հեռագրեն որ հոն բազմաթիւ ռուսանոցներ և զօրմուտներ մեծ ցոյցեր ըրեր են քաղաքապետութեան տան առջեւ:

Կարգ վերհաստատելու համար կանչուած կազաքները ցուցարարներու կողմէն դիմաւորուեր են հրազեններու արձակումներով: Սպանուած են 5 կազաքներ, 30 զօրմուտ և 15 ռուսանոցներ:

—Իարիլե «Ռուրնալ» թերթը կը հաղորդէ որ Գուրսի մէջ ալ մեծ խառնակութիւններ տեղի ունեցել են:

—Ռուս արտաքին գործոց նախարար Լամարոֆ ռուս վիրուսներուն օգնելու համար կազմուած յանձնախմբի նախագահու հի Տիկին Բէթթովային, իշխանի միջոցաւ հետեւեալ հետադիրը զրկած է:

«Նորին մեծութիւնը յանձնարարեց ինձ, որ անկեղծ շնորհակալութիւն յայտնեմ իշխանին, յանձնաժողովի նախագահու հոն, անդամներուն և ամբողջ պուլկար ժողովուրդին պուլկար նուէրին առթիւ որ շատ կը գնահատուի Նորին կայսր Մեծութեան կողմէն:

Իժիլկաներուն, ողորմած քորբերուն, և երեսուն մահճակալով հիւանդանոցին պիտի արտօնուի երթալ ծայրագոյն արեւելք և հաստատուի Խարպին, իբրեւ միակ բացառութիւն մը Պուլկարիոյ համար»:

—Մայիս 9ին Մուկուայէն կը հաղորդեն որ 8ի երեկոյին, Յարին Մուկուա հասած պահուն, աղնուականութեան պարագլու իշխան թրաքէցթոյ Մարին ողջունող ճառին մէջ հետեւեալ խօսքերը ըսած է:

«Հաւատացած եղէք Ձեր դժուրութիւն, որ Մուկուայի աղնուականութիւնը բոլոր ռուսերու հետ պատրաստ է Ձեր առաջին կոչին վրայ, հայրենիքի երջանկութեան համար զոհաբերել իր բոլոր զաւակները և հարստութիւնները»:

Отговорникъ Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна